

1917 թ. ՀԱՄԱՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՀՈՂԱՑԻՆ
ՀԱՇՎԱԽՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

(էՀՄ-ի և մաթեմատիկական մեթոդների կիրառման փորձ)

Ա. Խ. ՎԱՐԻԱՆՅԱՆ

Ելնելով պատերազմը մինչև հաղթական վախճան հասցնելու իր արտաքին քաղաքական կուրսից՝ ժամանակավոր կառավարությունը 1917 թ. ամռանն անցկացրեց համառուսաստանյան գյուղատնտեսական ու հողային հաշվառում: Այն ուներ ընդարձակ ծրագիր: Միաժամանակյա և ողջ երկրի համար միասնական ծրագրով անցկացված հաշվառումը մասնագետները գնահատեցին որպես արժեքավոր մասսայական աղբյուր:

Սույն հաշվառման աղբյուրագիտական արժեքները մեծապես պայմանավորված էին հետոեֆորմյան ժամանակաշրջանում ցարիզմի կողմից կատարված հողային հաշվառումների (1877, 1887, 1905, 1916 թթ.) դրական փորձով:

Արդյունքում ստացվեցին արժեքավոր մասսայական տվյալներ գյուղական բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքի, գյուղատնտեսական արտադրության, հողատիրության և հողօգտագործման, գյուղացիական ու կալվածատիրական տնտեսությունների և այլնի մասին:

Հաշվառումը կատարվել է գործիմաց մասնագետների կողմից: Ստացված տվյալները համարվում են ներկայացուցչական և ունեն բավականաչափ հավաստիություն և ճշգրտություն:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին հրատարակվեցին հաշվառման հանրագումարային տվյալները, ինչպես ողջ երկրի, այնպես էլ առանձին նահանգների վերաբերյալ:

Ռուս խորհրդային պատմական գիտությունն օգտագործել ու արժեքավորել է հրապարակի վրա եղած հանրագումարային տվյալները¹: Վերջինները բավարար, նույնիսկ խիստ արժեքավոր աղբյուր են համարվել (և շարունակում են համարվել) նկարագրական բնույթի հետազոտողների համար: Ներկայումս դրանք չեն կարող բավարարել վերլուծական հետազոտողների պահանջները, ի հայտ են եկել բազմաթիվ թերություններ: Ելնելով հանրագումարային տվյալների սահմանափակ հնարավորությունից՝ որոշ պատմաբաններ փորձում են էլեկտրոնային հաշվիչ մեթոդների (էՀՄ) և մաթեմատիկական մեթոդների միջոցով բարձրացնել դրանց լրատվական հնարա-

¹ Предварительные погубернские итоги Всероссийской сельскохозяйственной и поземельной переписи 1917 г. по 29 губерниям и 6 областям. М., 1919; Поездные итоги Всероссийской сельскохозяйственной и поземельной переписи по 57 губерниям и областям. — Труды ЦСУ, 1923, т. V, вып. 2; Предварительные итоги сельскохозяйственной и поземельной переписи 1917 г., вып. 1 и др.

² М. А. Анфимов. Российская деревня в годы первой мировой войны (1914—февраль 1917 г.). М., 1962; Массовые источники по социально-экономической истории России периода капитализма. М., 1979.

վորութունները: Սակայն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ նորամուծությունը մասնակիորեն կարող է լրացնել այդ բացը:

Բազմակողմանի վերլուծություն, լրատվական բարձր հնարավորությունների ապահովում, տնտեսությունների և սոցիալական խմբերի հստակ բնութագրում, տնտեսական ու սոցիալական հատկանիշների և երևույթների միջև գոյություն ունեցող փոխազդեցություններ ու փոխկապակցություններ կարող է ապահովել բացառապես հաշվառման քարտը: Այդ հնարավորությունները կարող են բացահայտվել ոչ թե տնայնագործական եղանակով ու պարզ թվաբանական գործողություններով կատարվող հաշվումների, այլ մաթեմատիկական վիճակագրական, պատմական կոնկրետ գիտական մեթոդների միջոցով, երբ առավելագույնս են օգտագործվում էՀՄ-ի ընձեռած բացառիկ ու անսահման հնարավորությունները:

Ինչպես ցույց են տալիս դիտարկումները, ռուսական պատմագրությունը 1917 թ. հաշվառման գիտական ուսումնասիրման ուղղությամբ իր առաջին ու վստահ քայլերն է անում⁴: Առայժմ հետազոտողներն օգտագործել են նախնական քարտի քիչ թվով ցուցանիշներ միայն, ինչը հնարավորություն չի տալիս լիովին բացահայտել առաջադրվող հիմնահարցի էությունը ողջ համակարգի մեջ: Այդ պատճառով կարծում ենք, որ նախնական քարտի աղբյուրագիտական հնարավորությունները դեռևս լիովին բացահայտված չեն և սպասում են իրենց հետազոտողներին:

Ինչ վերաբերում է հայ պատմագրությանը, ապա 1917 թ. համառուսաստանյան գյուղատնտեսական ու հողային հաշվառման նախնական քարտը գիտական լուրջ հետազոտության չի ենթարկվել: Մի քանի հեղինակներ⁵ իրենց աշխատանքներում ընդամենը օգտագործել են հանրագումարային տրվյալներ՝ զերծ շմալով դրանց բնորոշ նշված թրուություններից: Մեծ սպասելիք կար վերջերս ԳԱ պատմության ինստիտուտի մի խումբ գիտաշխատողների կողմից հրատարակված աշխատությունից⁶, որը հատուկ նվիրված էր 1916 թ. գյուղատնտեսական և 1917 թ. համառուսաստանյան գյուղատնտեսական ու հողային հաշվառման տվյալների մշակմանը: Եթե 1916 թ. գյուղատնտեսական հաշվառման հանրագումարային հրատարակված տվյալները պարզապես տեղափոխել են իրենց աշխատության մեջ ընթերցողներին և հետազոտողներին ծանոթացնելու համար, ապա 1917 թ. հաշվառման քարտերը հրատարակված հանրագումարային տվյալներ չլինելու պատճառով մշակման են ենթարկել:

Գրքի ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, որ թեև կատարվել է հսկայական աշխատանք և կազմված աղյուսակները կարող են նկարագրական հետազոտողների համար հետաքրքրություն առաջացնել, այնուամենայնիվ

⁴ Н. Б. Селунская. Крестьянское хозяйство Европейской России накануне Октября (к методике изучения переписи 1917 г.). — История СССР, 1987, № 5, с. 110—128.

⁵ А. М. Горюпкин. Сибирское крестьянство на рубеже двух веков: конец XIX—начало XX в Новосибирск 1967; В. Г. Тюковкин. Сибирское крестьянство накануне Октября. Иркутск, 1967; Математические методы в исследованиях по социально-экономической истории. М., 1975 и др.

⁶ Մ. Ն. Արնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1968; Ա. Խ. Վարդանյան, Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914—1917 փետրվար), Թեկ. դիս. ավտորիֆերատ, Երևան, 1981; Ա. Հակոբյան, Կարսի մարզի գյուղացիության սոցիալական կազմը (ըստ 1917 թ. գյուղատնտեսական հաշվահամարի նյութերի): ՊՀՀ, 1982, № 4, էջ 94—104:

⁷ Արևելյան Հայաստանը 1916—1917 թթ. մարդահամարներում, Երևան, 1992:

մենայնիվ դրանք կարող են ներկայացնել հայ գյուղի ընդհանուր, բայց ոչ ռեալ, ոչ ճշգրիտ պատկերը: Խոսքն առաջին հերթին վերաբերում է այն աղյուսակներին, որոնք կոչված են բացահայտելու գյուղացիության սոցիալ-դասակարգային կառուցվածքը:

Նրանիով վերոհիշյալից՝ սույն հոդվածում մեր առջև խնդիր ենք դրել կրկին անդրադառնալ 1917 թ. հաշվառման նախնական քարտի տվյալներին՝ նպատակ ունենալով բացահայտել նախահեղափոխական հայ գյուղական բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքը Նոր Բայազետի գավառի օրինակով: Հետազոտությունը կատարվել է էՀՄ-ի միջոցով, որի ընթացքում կիրառվել են մաթեմատիկական քանակական մեթոդներ: Վերջինս մեզ հնարավորություն տվեց բացահայտել նախորդ հետազոտողների կողմից կիրառված մեթոդի ոչ լիարժեք լինելը կապիտալիզմի դարաշրջանի արևելահայ գյուղական բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքը ուսումնասիրելու ժամանակ: Միաժամանակ փորձ է կատարվում կոնկրետ օրինակներով ցույց տալ, թե՛ այդ աղբյուրի մեծ հնարավորությունները, թե՛ այդ հարցի լուծման արդյունավետ ուղիներից մեկը:

Այդ նպատակին հասնելու համար ուսումնասիրության առարկա են դարձել Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի 8361 տնտեսությունները, այսինքն՝ այնքան (բացառությամբ գաղթականների մի մասի), ինչքան հետազոտել են վիճակագիրները: Նշանակում է՝ մենք գնացել ենք հարկադրական ընտրանքային հետազոտության ճանապարհով, որովհետև ոչ մեր մեղքով գավառի 136 գյուղերից 85-ը դուրս են մնացել հաշվառումից:

Սույն ուսումնասիրությունը կատարելիս մենք առաջնորդվել ենք պատմա-համակարգային մեթոդով: Համակարգային մոտեցումը և համակարգային վերլուծությունը լայնորեն և հաջողությամբ կիրառվում է ժամանակակից գիտության մեջ, նրան բնորոշ են հետևյալ կարևոր հատկանիշները.

— Բնական և հասարակական իրականությունը կազմված է ոչ թե առանձին, իրարից անջատ երևույթներից ու պրոցեսներից, այլ իրենից ներկայացնում է փոխկապակցված և փոխազդող օբյեկտների որոշակի համակարգային ամբողջություն:

— Բոլոր այլ համակարգերի նման այն ունի իր կառուցվածքը և ֆունկցիաները: Համակարգի բաղադրիչները համարվում են ենթահամակարգերը և տարրերը:

— Ենթահամակարգը առանձին համակարգ է ավելի մեծ համակարգի մեջ:

— Համակարգի մասերը գտնվում են միասնության մեջ: Չկա ամբողջ առանց մասերի և մասը՝ առանց ամբողջի: Ամբողջի և մասի փոխհարաբերություններում առաջատար դերը պատկանում է ամբողջին:

— Ամբողջի մասերը (ենթահամակարգ, տարր) կարող են ունենալ հարաբերական անկախություն: Այն կարող է բացահայտել միայն այդ տարրին բնորոշ հատկանիշները:

— Համակարգի ներքին կառուցվածքի կայունության ամեն մի խախտում բացասաբար է անդրադառնում նրա գործունեության վրա:

— Համակարգի կառուցվածքը և ֆունկցիաները սերտորեն փոխկապված են:

— Համակարգի բաղադրիչների հիերարխայի փոխկապվածությունը արտահայտվում է կոորդինացիայով (հորիզոնական կապեր) և սուբորդինացիայով (ուղղահայաց կապեր):

1917 թ. համառուսաստանյան գյուղատնտեսական ու հողային հաշվառման նախնական քարտը իրենից ներկայացնում է մի ամբողջական հա-

մակարգ, կազմված ենթահամակարգերից և տարրերից: Օրինակ, հողին վերաբերող ենթահամակարգն ունի հողի ընդհանուր շափ, պիտանի հող, վարելահող, ցանքատարածություն և այլ տարրեր: Անասնապահությանը վերաբերող ենթահամակարգն ունի բանող ձի, բանող եզ, խոշոր եղջերավոր անասուններ, կով, մանր եղջերավոր անասուններ, փոխադրող անասուններ, այլ տեսակի անասուններ: Նույն վիճակում են նաև մյուս ենթահամակարգերը: Ուրեմն, պետք է ուսումնասիրել յուրաքանչյուր ենթահամակարգի բոլոր կարևոր տարրերը փոխադարձ ազդեցության և փոխադարձ կապի մեջ, այնուհետև նման կապեր գտնել նաև բոլոր ենթահամակարգերի միջև և նոր միայն հանգել ընդհանրական եզրակացությունների:

Խնդրի լուծման համար 1917 թ. համառուսաստանյան դյուղատնտեսական ու հողային հաշվառման աղբյուրագրիտական ու վերլուծական հնարավորությունները բավականին բարձր են: Բավական է նշել, որ 17 չհամարակալած ու համարակալված 177 ցուցանիշներից մեկք ընտրել ենք, մեր կարծիքով, առավել հատկանշական 60 ցուցանիշներ, որոնցից սույն հոդվածում օգտագործվել են ընդամենը 6-ը: Բայց դրանով հարցը չի սպառվում, քանի որ առանձնացված 60 հորիզոնական ցուցանիշների մի մասը իր հերթին կազմված է բազմաթիվ ենթատարրերից: Այսպես, օրինակ, ազդը կազմված է 21 ենթատարրերից, դասը՝ 11 խմբերից, տնտեսությունների կատեգորիաները՝ 7 տարրից, տանտիրոջ զլխավոր զբաղմունքը՝ 9 խմբից և այլն: Ուրեմն, հիշյալ 60 ցուցանիշները իրատ պայմանական են, դրանց թիվը անհամեմատ ավելի մեծ է: Այդ հատկանիշների ամբողջությունը համակարգի հորիզոնական (սոցիալական) տարրերն են, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթահամակարգերի:

Ինչ վերաբերում է ուղղահայաց (կառուցվածքային) բաղադրիչներին, ապա այն կազմված է տնտեսությունների ոչ թե մեխանիկական շարքից, այլ խմբավորված է ըստ գյուղերի, գավառների, նահանգների, աշխարհագրական գոտիների և այլն: Անհրաժեշտության դեպքում ֆունկցիոնալ մեկ կամ մի քանի հատկանիշներ հեշտությանը կտրող են՝ զուգակցվել և մեկ շարքում կանգնել կառուցվածքային միավորի կողքին: Այսպես, օրինակ, տնտեսությունների սոցիալական խմբերն ըստ բանող անասունի և կովի կարելի է ներկայացնել և՛ դյուղի, գավառի, աշխարհագրական դոտու համար, և՛ ըստ տնտեսությունների կատեգորիաների, ազգային ու դասային կազմի, տանտիրոջ գլխավոր զբաղմունքի: Վերլուծության այս ձևը հենց վկայում է համակարգի կառուցվածք-գործառական փոխկապակցության, ներկայացրվող աղբյուրը (նաև հիմնահարցը) բազմակողմանի վերլուծության ենթարկելու մասին:

Անհրաժեշտ նյութը հավաքելուց հետո կատարվել է վերջինիս կողմորումը, մուտքագրումը և ստուգումը: Բոլոր անվանումները ստացել են թվերի տեսք՝ էՂՄ-ին հասկանալի դառնալու, նրա հիշողության մեջ պահելու համար: Ստացված թվերի շարքը հնարավորություն տվեց ստեղծել հստակ մաթեմատիկական դրվածք, կատարել քանակական-վիճակագրական հետազոտություն: Կազմվել է խնդրի լուծման աղբյուրի մը, լուծման հաջորդական քայլերը: Արդյունքում ստացվել են մաթեմատիկական ճշգրտության ելքային տվյալներ, որոնք, ըստ խնդրի դրվածքի, ժխտում կամ հաստատում են այս կամ այն դրույթը:

Մեր ընտրած նյութը հաջորդաբար անցնելով հիշյալ փուլերը, մշակման են ենթարկվել IBM-AT/PC հաշվիչ մեքենայի միջոցով:

Կողմորված և նախապատրաստված տվյալները FOXBASE+СУБD-ի և FOXSBASE ծրագրավորման լեզվով գրված մուտքի ծրագրերի օգնությամբ

մուտքագրվում են համապատասխան համախմբերի (файл) մեջ և ստեղծվում են Նոր Բայազետի գավառի 51 գյուղերի տնտեսությունների վերաբերյալ տվյալների համախումբ (НБ) և նորմատիվա-տեղեկատու ինֆորմացիա (НСИ) բաղկացած հինգ զանգվածներից: Դրանք են.

- ա) գյուղերի անվանումը,
- բ) տնտեսների գլխավոր զբաղմունքի տեսակները,
- գ) ազգությունը,
- դ) բնակչության դասերը,

ե) բնակչության կատեգորիաները՝ ըստ բնակչության վայրի և տնտեսության վարման եղանակի:

Աղյուսակներում ներկայացված յուրաքանչյուր թիվ ուղղակիորեն կախված է երկու ինդեքսներից՝ i , j , որտեղ i -ն բանոց անասուն ունեցող տնտեսության հատկանիշն է, իսկ j -ն կովերի առկայության հատկանիշը: i և j -ի փոփոխության հաճախականությունը 0-ից 4 է և 4-ից բարձր: Ինդեքսների փոխկապակցությունը որոշվում է հետևյալ բանաձևով. $f(i, j) = \sum_{k=1}^n K_k$, որտեղ

$k=1$, եթե տնտեսության ունեցած բանոց անասունների և կովերի գլխաքանակները համընկնում են i և j ինդեքսների համապատասխան արժեքների հետ և $k=0$, եթե դրանք չեն համապատասխանում: Արդյունքում ստացվում են բանոց անասուն և կով ունեցող (կամ չունեցող) տնտեսությունները բնութագրող ելքային աղյուսակներ՝ ըստ գյուղերի, կատեգորիաների, տանտիրոջ գլխավոր զբաղմունքի, դասերի և ազգության:

Առանց բացառության՝ հայ խորհրդային այն պատմաբանները, որոնք զբաղվել են գյուղական բնակչության կամ գյուղացիության սոցիալ-դասակարգային կառուցվածքի բացահայտման հարցերով, առաջնորդվել են պարզ նկարագրությամբ: Իսկ որտեղ օգտագործվել են վիճակագրական և հանրագումարային տվյալներ, այդ դեպքում հետազոտությունը աղոտ հիշնցրել է համակարգի ենթահամակարգի մեկ առանձին վերցրած տարրի հետազոտություն, որտեղ լիովին բացակայել է ենթահամակարգի տարրերի և ենթահամակարգերի միջև գոյություն ունեցող փոխկապակցությունը և փոխազդեցությունը: Մեկ առանձին վերցրած տարրը կարող է ունենալ հարաբերական անկախություն և պետք է բնութագրեր տվյալ հատկանիշը միայն: Այնինչ, վերոհիշյալ հեղինակների մոտ այն ձեռք է բերել չհիմնավորված բացարձակ արժեք:

Ըստ 1917 թ. համառուսաստանյան գյուղատնտեսական և հողային հաշվառման վերջին ուսումնասիրողների⁸, որոնք այդ հաշվառումը, շղիտես ինչու, անվանում են մարդահամար, ըստ հողի ցուցանիշի չթավորները կազմում են 64,3 տոկոս, միջակները՝ 32,3 տոկոս, իսկ հարուստները՝ 3,4 տոկոս (աղյուսակ № 5), իսկ ըստ բանոց անասունների (աղյուսակ № 12) չթավորները կազմում են 53,2 տոկոս, միջակները՝ 39,7 տոկոս, հարուստները՝ 6,5 տոկոս: Երկու ցուցանիշի դեպքում ստացվել է չթավորների, միջակ-

¹ Տե՛ս Ա. Մառտիյան, Գյուղացիության դրոփյունը նախասովետական Հայաստանում (1900—1920 թթ.), Երևան, 1948, էջ 35—36; Օ. Մ. Հովհաննիսյան, Ազրաբային հարցը Երևանի նախկին նահանգում 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին, Երևան, 1949, էջ 41—45; Туманян О. Е. Экономическое развитие Армении, т. 1, Ереван, 1951, с. 132—133; А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне, Ереван, 1959, с. 112—133, Ա. Ս. Համբարյան, Գ. Ա. Մուրադյան, Ա. Հ. Սիմոնյան, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմությունը, Երևան, 1988, էջ 117—127:

⁸ Արևելյան Հայաստանը 1916—1917 թթ. մարդահամարներում, Երևան, 1992, էջ 12, 14:

ների և ունևորների վերաբերյալ վեց արդյունք, տաս ցուցանիշի դեպքում կատարվեց 30 արդյունք: Ուրեմն, ստացվում են իրար հետ կապ չունեցող աղյուսակների խմբեր և արդյունքներ:

Իսկ Ա. Հակոբյանի «կոմպլեքսային» մոտեցման ժամանակ կատարվել է շատ ցուցանիշների ուսումնասիրություն՝ առանց փոխկապակցության, փոխազդեցության և ուղիղ ու հակադարձ կապի աստիճանի բացահայտման: Կարսի մարզի 77 գյուղերի 3442 հետազոտված գյուղացիական տնտեսություններից ըստ ցանքսի շքավոր է դարձել 42,7 տոկոսը, ըստ բանող անասունի՝ 62,6 տոկոսը, ըստ բանող ձիու՝ 84 տոկոսը, վարձու տրված հողի շահով՝ 84,8 տոկոսը, գյուղատնտեսական գործիքների գծով՝ 39,6 տոկոսը: Եվ չգիտես ինչը ինչի հետ համադրելով ու խմբավորելով՝ նույն 3442 տնտեսությունների համար ստանում է շքավորների մեկ այլ թիվ (նշված գյուղերի և ողջ մարզի համար)՝ 42,8 տոկոս⁹: Փորձենք հակադրվել: Ինչպես կարելի է շքավոր համարել մեկ բանող անասուն ունեցող տնտեսությունը, երբ անհայտ է, թե նույն տնտեսությունն ինչքան հող, մանր ու խոշոր եղջերավոր անասուն ունի, ինչքանով է ապահովված գյուղատնտեսական գործիքներով: Իսկ եթե ունի օժանդակ եկամտաբեր զբաղմունք կամ ավելին՝ առևտրաարդյունաբերական ձեռնարկություն: Իսկ ինչպե՞ս վարվել, եթե մեկ բանող անասուն ունեցող տնտեսությունն ունենա ունևոր տնտեսությանը բնորոշ ցուցանիշներ: Եվ վերջապես, եթե պարզվի, որ տանտիրոջ կամ ընտանիքի գլխավոր զբաղմունքը ոչ մի կապ չունի բանող անասունի ցուցանիշի հետ, կամ ունի աննշան կապ, իսկ եթե պարզվի, որ այդ տնտեսությունը եկվոր է, կամ գաղթական...

Ուրեմն, գյուղական բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ վերոհիշյալ և բազմաթիվ շհիշատակված այլ հարցերին կտրվի միանշանակ պատասխան:

Քանի որ մեկ հոդվածի շրջանակում հնարավոր չէ բացահայտել բոլոր հատկանիշների բոլոր կապերը, ուստի սահմանափակվեցինք ենթահամակարգերից մեկի կարևոր ցուցանիշներով: Դրանցից մեկը կովն է, մյուսը՝ բանող անասունը:

Տեղի սղոթյան պատճառով նորից հնարավոր չէ այդ երկու ցուցանիշների վերաբերյալ առանձին աղյուսակների տեղադրումը, ուստի սահմանափակվենք միայն ելքային տվյալներով: Հիմք ընդունելով միայն բանող անասունի վերաբերյալ ելքային արդյունքները՝ ըստ գյուղերի ստացվել է հետևյալ պատկերը: Նոր Բայազետի գավառի 8361 տնտեսություններից անասուն ընդհանրապես չունեն 1658-ը, կամ՝ 19,8 տոկոսը, բանող անասուն չունեն 3485-ը, կամ 41,7 տոկոսը: Բանող անասուն չունեցողները և միայն մեկ բանող անասուն ունեցողները կազմում են $3485 + 827 = 4312$ տնտեսություն, կամ՝ 51,6 տոկոսը: Քննության չի դիմանում նաև միջին հաշվով մեկ տնտեսությանն ընկնող բանող անասունների քանակի պարզաբանումը, որովհետև ակնհայտ է բանող անասուն չունեցող 3485 տնտեսությունների առկայությունը:

Նույն հետազոտության շրջանակներում 8361 տնտեսություններից այս անգամ կով չունեցող 2661 տնտեսություն, կամ՝ ընդհանուրի 31,8 տոկոսը, կով չունեցող և միայն մեկ կով ունեցող տնտեսությունները կազմում են $2661 + 2668 = 5329$ տնտեսություն, կամ՝ ամբողջի 63,7 տոկոսը:

Այս կարգի հետազոտության (այսինքն առանձին ցուցանիշների արդյունքների հիման վրա եզրակացության հանգելը) անարդյունավետությունն

⁹ Ա. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 97—104:

ակնհայտ է, որովհետև անհնար է, որ միևնույն քանակի տնտեսությունների մեջ (տվյալ դեպքում 8361 տնտեսություն) լինեն երկու շափի շքավորներ: Մի դեպքում, ըստ բանող անասունների, դրանց թիվը կազմում է 51,6 տոկոս, մյուս դեպքում, ըստ կովերի, 63,7 տոկոս: Թվում է, թե ներկայացվող երկու տվյալներից ճշգրիտ պետք է համարվի որևէ մեկը: Իրականում ոչ մեկը, ոչ էլ մյուսը ճշգրիտ համարվել չեն կարող, քանզի փոխկապակցություն չկա այդ երկու իրոք կարևոր ցուցանիշների միջև: Չքավորների իրական թիվը կարելի է բացահայտել միայն այն դեպքում, երբ միևնույն 8361 տնտեսությունների մեջ հիշյալ երկու ցուցանիշների հիման վրա կատարված համակարգային հետազոտության շրջանակներում կգտնենք այն տնտեսությունները, որոնք միաժամանակ և՛ բանող անասուն, և՛ կով չունեն, կամ ունեն այնքան, որ մեզ հիմք է տալիս դրանց համարել շքավոր: ԷՉՄ-ի միջոցով հնարավոր դարձավ պարզել այդ երկու ցուցանիշների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը և այլ գործոնների ազդեցությունը: Ըստ գյուղերի ստացվեց հետևյալ պատկերը. կով և բանող անասուն չունեցող տնտեսությունների թիվը կազմում է 1997, կով չունեցող, բայց մեկ բանող անասուն ունեցող տնտեսությունների թիվը՝ 1997 + 172 = 2169, Միաժամանակ կով չունեցող տնտեսություններից 363-ը ունեն երկու, 65-ը՝ երեք, 40-ը՝ չորս, 24-ը՝ 5 և ավելի բանող անասուններ:

Հնարավոր է նաև հակադարձ կապի ապահովումը: Նույն հետազոտության շրջանակներում 5 և ավելի կով ունեցող տնտեսություններից 5-ը չունեն բանող անասուն, բայց 79-ը նաև ունեն 5 և ավելի բանող անասուն: Ուրեմն 79 տնտեսություն 5 և ավելի կով ունի, նաև 5 և ավելի բանող անասուն ունի: Հենց այդ տնտեսությունները պետք է համարել ունեոր, իսկ 5 և ավելի կով ունեցող տնտեսություններից բանող անասուն չունեցող հինգ տնտեսության համար պետք է առաջնորդվել գիտականորեն մշակված չափանիշներով, որպեսզի պարզվի դրանց սոցիալական խումբը: Ակնհայտ է, որ 5 և ավելի կով ունենալու պատճառով նույն հինգ տնտեսությունները համարվում են ունեոր, բայց բանող անասուն չունենալու պատճառով համարվում են շքավոր:

Արդյունքների վերլուծությունը դեռ կարելի է շարունակել, բայց իմաստ չունի, քանի որ դրանք վերաբերում են միայն գյուղերին: Իսկ վերջիններս բարդ օրգանիզմ են, և դրանց վրա ազդում են նաև այլ գործոններ:

ԷՉՄ-ի միջոցով հնարավոր դարձավ պարզել այդ գործոնների մեծ ազդեցությունը: Օրինակ, ինչպե՞ս կարելի է հաշվի շառնել ազգային կազմն ու առանձնահատկությունը, գյուղական բնակչության դասային կազմը, տանտիրոջ կամ ընտանիքի գլխավոր զբաղմունքը, տնտեսությունների կատեգորիաները: Ըստ կատեգորիաների՝ գյուղական բնակչությունը բաժանվում է առկա, կողմնակի, բացակա, մասնատիրական, գաղթական բաղադրիչների (աղյուսակ № 1): Հասկանալի է, որ բնակչության բաժանումը նման բաղադրիչների անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Այդ պատճառով հետազոտության շրջանակները ընդարձակելով՝ տարածել ենք կարևոր գործոններ համարվող ազգ, դաս և տանտիրոջ գլխավոր զբաղմունք կատեգորիաների վրա:

Հետևենք գյուղական բնակչության սոցիալ-դասակարգային կառուց-

վածքին ըստ ազգային կազմի (աղյուսակ № 2): Այս վերլուծության ժամանակ բացահայտվում են ոչ միայն ազգերի առկայությունը, քանակական արդյունքները, այլև սոցիալական բազմաթիվ թաքնված երևույթներ ու հարաբերություններ: Ամենամեծ էթնիկական խումբն, իհարկե, կազմում են հայերը: Անհամեմատ փոքր խումբ են կազմում թաթարները, քրդերը, ռուսները:

Գյուղական բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքը ըստ կատեգորիաների
Աղյուսակ № 1

Տես. կատեգորիաները	Տես-ի խմբավոր. գավառում	Բանող անասուն շունեցող տնտ.	Բանող անասուն ունեցող տնտեսություն.				
			1	2	3	4	5 և ավելի
1	2	3	4	5	6	7	8
առկա	կող շունեցող	1871	170	362	64	38	23
	1 կող ունեցող	993	398	956	134	119	57
	2 կող ունեցող	446	191	862	191	213	115
	3 —»—	58	25	200	75	88	98
	4 —»—	17	8	82	50	57	75
	5 և ավելի	3	2	25	23	31	77
կողմնակի	կող շունեցող	45	2	1	1	2	0
	1 կող ունեցող	5	0	1	0	1	0
	2 —»—	6	2	1	0	0	0
	3 —»—	1	0	1	0	0	0
	4 —»—	1	0	2	0	0	0
	5 և ավելի	2	0	0	0	0	0
բացակա	կող շունեցող	61	0	0	0	0	0
	1 կող ունեցող	1	0	0	1	1	0
	2 —»—	0	0	0	0	0	0
	3 —»—	0	0	0	0	0	0
	4 —»—	0	0	0	0	0	0
	5 և ավելի	0	0	0	0	0	0
մասնատիրական	կող շունեցող	0	0	0	0	0	1
	1 կող ունեցող	0	0	0	0	0	0
	2 —»—	0	0	0	0	0	0
	3 —»—	0	0	0	0	0	0
	4 —»—	0	0	0	0	0	0
	5 և ավելի	0	0	0	0	0	2
գաղթական	կող շունեցող	20	0	0	0	0	0
	1 կող ունեցող	1	0	0	0	0	0
	2 —»—	1	0	0	0	0	0
	3 —»—	1	0	0	0	0	0
	4 —»—	0	0	0	0	0	0
	5 և ավելի	0	0	0	0	0	0
Ընդամենը	կող շունեցող	1997	172	363	65	40	24
	1 կող ունեցող	1000	398	957	135	121	57
	2 —»—	453	193	863	191	213	115
	3 —»—	60	25	201	75	88	98
	4 —»—	18	8	84	50	57	75
	5 և ավելի	5	2	25	23	31	79

Ազգ	Կողմնակի խմբավոր- գրվածքով	Բանող անասուն չունեցող տներ	Բանող անասուն ունեցող տնտեսություններ				
			1	2	3	4	5 և ավելի
Հայեր	Կողմնակի չունեցող	1695	119	325	60	34	19
	1 կողմնակի ունեցող	836	271	783	119	95	48
	2 —»—	364	97	500	118	152	79
	3 —»—	45	5	71	24	42	45
	4 —»—	6	2	14	9	17	36
	5 և ավելի	1	0	3	0	1	11
Քաղաքացիներ	Կողմնակի չունեցող	203	48	33	4	1	1
	1 կողմնակի ունեցող	93	108	147	6	7	3
	2 —»—	47	75	319	49	23	15
	3 —»—	6	10	115	33	25	22
	4 —»—	4	5	58	34	21	16
	5 և ավելի	0	1	12	9	13	17
Քրդեր	Կողմնակի չունեցող	33	4	3	1	0	1
	1 կողմնակի ունեցող	37	14	11	2	0	1
	2 —»—	22	10	21	8	6	0
	3 —»—	3	4	4	3	2	4
	4 —»—	2	0	2	0	2	2
	5 և ավելի	1	0	0	0	0	0
Ռուսներ	Կողմնակի չունեցող	62	0	2	0	5	3
	1 կողմնակի ունեցող	33	5	16	8	19	5
	2 —»—	19	10	23	16	32	21
	3 —»—	6	5	7	14	19	27
	4 —»—	4	1	8	5	17	21
	5 և ավելի	2	1	4	6	16	43
Հնդկացիներ	Կողմնակի չունեցող	1997	172	363	65	40	24
	1 կողմնակի ունեցող	1000	398	957	135	121	57
	2 —»—	453	193	863	191	213	115
	3 —»—	60	25	201	75	88	98
	4 —»—	18	8	84	50	57	75
	5 և ավելի	5	2	25	23	31	79

Հետևելով ստացված ելքային արդյունքներին՝ նկատում ենք, որ բոլոր ազգերի մոտ էլ բոլոր վեց խմբերում (կողմնակի չունեցողից մինչև 5 և ավելի կողմնակի ունեցողները) կան բազմաթիվ տնտեսություններ, որոնք անպայման ունեն 5 և ավելի բանող անասուններ: Դա նշանակում է, որ ազգային գործոնը չի խանգարում, ընդհակառակը՝ նպաստում է համակարգային մեթոդի և փոխադարձ կապերի վերլուծության արդյունավետ գործունեությանը: Միևնույն տնտեսությունը (տնտեսությունների խումբը), որոնք համարվում են չբավոր՝ ըստ կողմնակի ցուցանիշի, միաժամանակ համարվում են ունեոր՝ ըստ բանող անասունի ցուցանիշի: Հայերից կողմնակի և բանող անասուն չունի 1695 տնտեսություն, բայց կողմնակի ունեցող տնտեսություններից 19-ը ունեն 5 և ավելի բանող անասուն: Նույն տեղում 5 և ավելի կողմնակի ունեցող տնտեսություններ մեկն է, բայց 5 և ավելի կողմնակի ունեցողների թիվը կազմում է 11: Նման

հակասական արդյունքներ կարելի է հանդիպել նաև զավառում ապրող մյուս ազգերի մոտ: Տարբերությունը միայն քանակի ու միտումի մեջ է. միաժամանակ կով և բանող անասուն ունենալու ձգտումն ուժեղ է դրսևորվում հայերի ու ռուսների մոտ: Ռուսների համար դա ոչ միայն զարգացման աստիճան է նշանակում, այլև նախորդ տասնամյակներում ցարիզմի կողմից նրանց համար նպաստավոր պայմանների ապահովում: Թաթարների մոտ այն թեև թույլ, բայց դրսևորվում է: Ունենալով զլխավոլյապես անասնապահական զբաղմունք՝ նրանց ձեռքում նախորդ ժամանակներից մնացել էր բարեբեր հողեր, հետևաբար բանող անասուն՝ այդ հողերը մշակելու համար: Քրդերի մոտ մեծ է եղել անասնապահությանը զբաղվելու գործոնը: Բանող անասուն ունենալը, պայմանավորված լինելով հողագործությանը զբաղվելու գործոնի հետ, նրանց մոտ թույլ է դրսևորվել:

Նույն հետազոտությունը բոլորովին այլ երանգավորում է ստանում դասային կազմի տեսանկյունից (աղյուսակ № 3): Մի բան է, երբ գյուղացիական դասին պատկանող տնտեսությունները կով ու բանող անասուն ունեն, կամ չունեն: Բոլորովին այլ բան է, երբ այն վերագրվում է հեղեղականներին, քաղքենիներին, նույնիսկ սեփականատեր գյուղացիներին (վերջինիս նկատմամբ նույնպես պետք է առանձին վերաբերմունք ցույց տալ): Հետազոտությունն ըստ դասային կազմի վերլուծելիս նույնպես հաստատվում է նախորդ հետազոտողների կիրառած մեթոդի անկատարությունը:

Փյուզգիոյում սոցիալ-տնտեսական կառուցվածքը ըստ դասերի

Աղյուսակ № 3

Դասը	տնտ. -ի կազմավոր. զավառում	բանող անասուն չունեցող տնտ.	Բանող անասուն ունեցող տնտեսություններ				
			1	2	3	4	5 և ավելի
գյուղացիներ	կով չունեցող	1976	171	362	65	38	23
	1 կով ունեցող	997	396	954	135	119	56
	2 —»—	449	191	860	191	211	114
	3 —»—	60	23	200	73	86	94
	4 —»—	18	8	84	50	57	75
	5 և ավելի	5	2	25	23	31	79
քաղքենի	կով չունեցող	15	0	0	0	2	0
	1 կով ունեցող	1	0	0	0	1	0
	2 —»—	1	1	0	0	0	0
	3 —»—	0	0	0	0	0	0
	4 —»—	0	0	0	0	0	0
	5 և ավելի	0	0	0	0	0	0
սեփականատեր գյուղացիներ	կով չունեցող	3	0	1	0	0	1
	1 կով ունեցող	2	2	2	0	1	0
	2 —»—	1	1	2	0	1	1
	3 —»—	0	2	1	2	2	3
	4 —»—	0	1	2	3	3	1
	5 և ավելի	0	0	2	3	10	22
Հեղամենը	կով չունեցող	1997	172	363	65	40	24
	1 կով ունեցող	1000	398	957	135	121	57
	2 —»—	453	193	863	191	213	115
	3 —»—	60	25	201	75	88	98
	4 —»—	18	8	84	50	57	75
	5 և ավելի	5	2	25	23	31	79

Քաղաքներին հասին պատկանող շուրջ երկու տասնյակ տնտեսություններից 15-ը ոչ կով ունի, ոչ բանող անասուն: Հարց է առաջանում, եթե շեն զբաղվում հողագործությամբ և անասնապահությամբ, ապա ինչպե՞ս են գոյատևում: Քանի որ արդեն գոյատևել են, երկրորդ հարցն է առաջանում. նրանց ընդհանրապես պե՞տք է զբաղվել վերոհիշյալ գործունեությամբ, թե ունեն այլ զբաղմունք:

Այդ և նման այլ հարցերի պատասխանը կարող ենք ստանալ, եթե հետազոտությունը տեղափոխենք տանտիրոջ գլխավոր զբաղմունքը բնութագրող դաշտը (աղյուսակ № 4): Խնդրի լուծման ընթացքում մենք հանդիպել ենք տանտիրոջ գլխավոր զբաղմունքի բազմաթիվ տեսակների: Դրանց առանձին-առանձին օգտագործումը անիմաստ ու աննպատակահարմար է դառնում: Ելնելով նախնական տվյալների կանտրոնացման, այսինքն՝ այդ ցուցանիշների ըստ կարևոր հատկանիշների խմբավորման անհրաժեշտու-

Վյուզական բեակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքը ըստ գլխավոր զբաղմունքի

Աղյուսակ № 4

Գլխավոր զբաղմունք	տնտ.-ի խմբավոր. գավառում	բանող անասուն շունեցող տնտեսութ.	Բանող անասուն ունեցող տնտեսություններ				
			1	2	3	4	5 և ավելի
			4	5	6	7	8
Հողագործ	կով շունեցող	1906	168	357	64	37	24
	1 կով ունեցող	986	398	953	134	120	56
	2 —»—	443	191	860	191	211	114
	3 —»—	59	25	200	75	88	96
	4 —»—	17	8	84	50	57	74
5 և ավելի	3	2	25	23	31	78	
արհեստավորներ	կով շունեցող	21	1	2	0	0	0
	1 կով ունեցող	3	0	0	1	0	0
	2 —»—	1	2	1	0	0	0
	3 —»—	0	0	1	0	0	0
	4 —»—	0	0	0	0	0	0
5 և ավելի	0	0	0	0	0	0	
ծառայողներ	կով շունեցող	15	1	0	0	0	0
	1 կով ունեցող	2	0	0	0	0	0
	2 —»—	1	0	0	0	0	0
	3 —»—	0	0	0	0	0	0
	4 —»—	0	0	0	0	0	0
5 և ավելի	0	0	0	0	0	0	
բանվորներ	կով շունեցող	10	0	2	0	0	0
	1 կով ունեցող	4	0	1	0	0	0
	2 —»—	1	0	1	0	0	0
	3 —»—	0	0	0	0	0	0
	4 —»—	0	0	0	0	0	0
5 և ավելի	0	0	0	0	0	0	
անասնապահներ	կով շունեցող	18	0	0	1	0	0
	1 կով ունեցող	2	0	0	0	0	0
	2 կով ունեցող	5	0	0	0	0	0
	3 —»—	1	0	0	0	0	0
	4 —»—	1	0	0	0	0	0
5 և ավելի	2	0	0	0	0	0	

1	2	3	4	5	6	7	8
սուկսուր, արդյունաբերություն	կով շունեցող	20	2	2	0	2	0
	1 կով ունեցող	2	0	2	0	1	0
	2 —»—	2	0	0	0	0	0
	3 —»—	0	0	0	0	0	0
	4 —»—	0	0	0	0	0	0
	5 և ավելի	0	0	0	0	0	0
հոգևորականներ	կով շունեցող	5	0	0	0	1	0
	1 կով ունեցող	0	0	1	0	0	1
	2 —»—	0	0	1	0	2	1
	3 —»—	0	0	0	0	0	2
	4 —»—	0	0	0	0	0	1
	5 և ավելի	0	0	0	0	0	1
մտավորականներ (դպրոց, արվեստ, գրականություն)	կով շունեցող	1	0	0	0	0	0
	1 կով ունեցող	0	0	0	0	0	0
	2 —»—	0	0	0	0	0	0
	3 —»—	0	0	0	0	0	0
	4 —»—	0	0	0	0	0	0
	5 և ավելի	0	0	0	0	0	0
սպասարկման ոլորտ	կով շունեցող	1	0	0	0	0	0
	1 կով ունեցող	1	0	0	0	0	0
	2 —»—	0	0	0	0	0	0
	3 —»—	0	0	0	0	0	0
	4 —»—	0	0	0	0	0	0
	5 և ավելի	0	0	0	0	0	0
Ընդամենը	կով շունեցող	1907	172	363	65	40	24
	1 կով ունեցող	1000	398	957	185	121	57
	2 —»—	453	193	863	191	213	115
	3 —»—	60	25	201	75	88	98
	4 —»—	18	8	84	50	57	75
	5 և ավելի	5	2	25	28	31	79

Յունից՝ ինչով զբաղվում է ժամանակակից բազմաշափ վերլուծության մեթոդը, կատարել ենք զխավոր զբաղմունքի տեսականների խմբավորում: Ստացել ու ներկայացրել ենք այնպիսի հետաքրքրություն ներկայացնող բնութագրական խմբեր, որոնք միանշանակ հաստատում են առաջարկվող մեթոդի առավելությունները: Այսպես, եթե հողագործությամբ զբաղվող տնտեսությունների խումբը բանող անասուն չունի, նշանակում է նա զրկված է իր հողը վարելու հնարավորությունից: Իսկ եթե նույն խումբը կով չունի, նշանակում է նա զրկված է իր ընտանիքը պահելու կարևոր պայմաններից մեկից: Անասնապահության զբաղվող տնտեսությունների խմբի համար բանող անասուն չունենալը դժբախտություն չէ, որովհետև հող վարելը առաջնային չէ նրա համար: Իսկ ահա կով չունենալը մեծ միևնու է, թեև խնդիրը լիարժեք լուծում չի ստանա, եթե չպարզվի նաև այդ խմբի մանր եղջերավոր անասուն ունենալու հանգամանքը: Հետաքրքիր է հետևյալ հանգամանքը. անասնապահության զբաղվող տնտեսությունների խումբը (18) եթե կով չունի, անպայման նաև բանող անասուն չունի սույն հետազոտության շրջանակներում: Իսկ հողագործների խմբի մեջ բոլոր վեց սոցիալական շերտերում կով չունենալը դեռ չի նշանակում նաև բանող անասուն չունենալ: Ավելին, 1906 տնտեսություն կով ու բանող անասուն չունեն, բայց և կով չունեցողներից 168-ը ունեն մեկ, 357-ը՝ 2, 64-ը՝ 3, 37-ը՝ 4 և 24-ը՝ 5 և ավելի բանող անասուններ:

Մեր կարծիքով, կարևոր է ոչ այնքան սխալի քանակական ու տոկոսա-

յին արտահայտությունը, որքան սխալ գործելակերպը, սխալ մեթոդը: Այլապես ինչպե՞ս բացատրել 21 տնտեսության վիճակը, որոնք կով ու բանող անասուն շունենալու պատճառով ծայրահեղ շքավոր կարող էին համարվել այն դեպքում, երբ այդ տնտեսությունների տանտիրոջ գլխավոր զբաղմունքը եղել է արհեստը: Ինչպես վարվել կով և բանող անասուն շունեցող 15 տնտեսությունների հետ, եթե տանտիրոջ գլխավոր զբաղմունքը ծառայող լինելն է: Առավել անհարմար վիճակի մեջ են հայտնվել շքավոր համարվող (կով ու բանող անասուն շունեցող) 20 տնտեսությունները այն դեպքում, երբ դրանց տանտերերի գլխավոր զբաղմունքը համարվել է առևտուրը և արդյունաբերությունը: Պարզաբանման կարիք ունեն նաև բանվոր, սպասարկման ոլորտի աշխատող, հոգևորական, մտավորական համարվող (բզբաղմունք ունեցող) սոցիալական շերտերի վիճակը:

Ակնհայտ է, որ վերլուծության ենթարկելով համակարգի միայն երկու կարևոր տարրեր, մենք ընդամենը փորձեցինք ցույց տալ մեր կողմից կիրառվող մեթոդների առավելությունները և դրանց միջոցով սոցիալ-դասակարգային կառուցվածքը լիովին բացահայտելու մեծ հնարավորությունները: Ինչ վերաբերում է մեր խնդրի զրվածքին, ապա այն ենթադրում է ստանալ վերջնական ելքային արդյունքներ նույն տրամաբանությամբ ու մեթոդներով:

Ելնելով վերոհիշյալից գտնում ենք, որ

1. Գիտականորեն անընդունելի է որևէ մեկ տնտեսական կամ սոցիալական հատկանիշի հիման վրա հետազոտություն կատարել գյուղական բնակչության կամ առանձին վերցրած գյուղացիության սոցիալ-դասակարգային կառուցվածք բացահայտելու համար:

2. Ներկայացվող հիմնահարցը բազմակողմանիորեն ուսումնասիրելու և հուսալի արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է միաժամանակ հիմք ընդունել տնտեսական ու սոցիալական բազմաթիվ հատկանիշներ:

3. Զանգվածային վիճակագրական տվյալները (տվյալ դեպքում 1917 թ. գյուղատնտեսական ու հողային հաշվառման տվյալները) կարող են մեծ արդյունավետություն ունենալ էՆՄ-ի կիրառման դեպքում, երբ հնարավոր է դառնում բացահայտել բազմաբնույթ և թաքնված կապեր ու փոխազդեցություններ:

4. Անհրաժեշտ է ունենալ խնդրի հստակ դրվածք, օգտագործել ժամանակակից գիտության նվաճումները՝ կիրառելով խնդրի լուծմանը նպաստող ընդհանուր գիտական, կոնկրետ պատմական և մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության մեթոդներ:

5. Վերջապես, ելնելով պատմական գիտության արդի պահանջներից, պետք է արմատապես վերանայել ու նորոգել լուսաբանել հիշյալ հիմնահարցը, քանզի նախորդ հետազոտությունները սոսկ նկարագրական են, իսկ արդյունքները՝ ոչ ճշգրիտ:

А. Х. ВАРДАНЯН — Вокруг исследования итогов Всероссийской сельскохозяйственной и поземельной переписи 1917 г. — Исходя из признания ошибочности исходного постулата о социально-классовой структуре населения, в статье предлагается новый метод обработки итогов Всероссийской переписи по Армении.